

4.1.2 Մարդասիրական օգնություն

Ըստ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրած բեռնամաքսային հայտարարագրերի տվյալների, 2011թ. հունվարին մարդասիրական օգնության կարգով, ՀՀ են ներմուծվել 126.1 տոննա ապրանքներ, որոնց արժեքը կազմել է 3056.6 մլն. դրամ կամ 8.3 մլն. դոլար: Ստացված օգնության 84.0%-ը կազմել են քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանքը, 4.7%-ը՝ մանածագործական իրերը, 3.0%-ը՝ սարքերը և ապարատները, 2.8%-ը՝ տարբեր արդյունաբերական ապրանքներ, իսկ 5.5%-ը՝ մնացած ապրանքները: